Հավելված

2026թ. փետրվարի 02-ին

կնքված N O-1146-11015 պայմանագրի

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	գումար (դրամ)
1.	Դպրոցականների օլիմպիադաների անցկացում /ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 5-ի N 280-Ն /փոփոխություն 01.12.2024թ., հր. 78-Ն/ հրամանով հաստատված «ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման» կարգ/	Դպրոցականների առարկայական հանրապետական օլիմպիադաների **դպրոցական փուլի** օնլայն կազմակերպում 16 առարկաներից:	**- 2026 թ. հունվարին կատարվել են հետևյալ աշխատանքները՝** - 2025թ. դեկտեմբերին անցկացված բոլոր առարկաների պատասխանների թերթիկները ըստ ընթացակարգի հավաքվել են և ստուգող-մշակող հանձնաժողովի կողմից ստուգվել են համապատասխան հատուկ սարքերի և ծրագրի միջոցով, -ստուգման արդյունքները ամփոփվել են և հրապարակվել www.olymp.am կայքում, -դպրոցական փուլի արդյունքները մշակվել են ըստ մարզերի և առարկաների: - հանձնաժողովների նախագահների կողմից կազմած առաջադրանքները ընթացակարգով սահմանված օրերին՝ օլիմպիադան սկսելուց մեկ ժամ առաջ, տրամադրվել են մարզային ներկայացուցիչներին, -	Շնորհալի և ստեղծագործ կարողություններով օժտված աշակերտների հայտնաբերում, նրանց մոտ ուսումնական առարկաների նկատմամբ լրացուցիչ հետաքրքրությունների առաջացում, մասնագիտական կողմնորոշման խթանում:	ըստ ԿԳՄՍ նախարարության հաստատած ժամանակացույցի	
2.	Մարզային փուլի կազմակերպում	Դպրոցականների առարկայական հանրապետական օլիմպիադաների **մարզային փուլի** կազմակերպում 16 առարկաներից:	**-2026թ. հունվարի 14-ից փետրվարի 6-ը կազմակերպվել են դպրոցականների առարկայական 16 օլիմպիադաների մարզային փուլի աշխատանքները՝** - 2025-2026 ուստարվա առարկայական հանրապետական օլիմպիադաների մարզային փուլի մասնակիցների ցուցակների հրապարակվել են www.olymp.am կայքում, - մաթեմատիկա առարկայի 5-7-րդ դասարանների և կենսաբանություն առարկայի մարզային փուլերը կազմակերպվել են այնպես, ինչպես դպրոցական փուլի աշխատանքները բոլոր մարզերին բաժանվել են		ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հաստատած ժամանակացույցի /2026թ. հունվարի 14-ից փետրվարի 6-ը/	

			համապատասխան քանակությամբ պատասխանների թերթիկներ, հավաքագրվել են և ստուգվել հատուկ ծրագրի և սարքերի միջոցով, արդյունքները մշակվել են ըստ մարզերի և առարկաների, - բոլոր 16 առարկաների գծով կատարվել են մարզային փուլի կազմակերպման և համակարգման աշխատանքներ /ճշգրտվել են մասնակիցների անվանացանկերը և դրանք տեղադրվել են olymp.am կայքում, առաջադրանքները, լուծումները, ստուգման չափանիշները և պատասխանները ուղարկվել են մարզային կոորդինատորներին, մարզային հանձնաժողովների կողմից մասնակիցների աշխատանքները ստուգելուց հետո արդյունքները հավաքագրվել են, մշակվել են ըստ միավորների, որից հետո ճշգրտվել են հանրապետական փուլի մասնակիցների անվանացանկերը/, - հանրապետական փուլ անցած մասնակիցների ցուցակները տեղադրվել են olymp.am կայքում, - դպրոցական և մարզային փուլերի առաջադրանքները կազմելու, լուծումներն ու պատասխանները գրելու համար առարկայական հանձնաժողովների նախագահներին կատարվել են վճարումներ՝ ըստ նախահաշվի, - բոլոր օլիմպիադաները կազմակերպվել են ԿԳՄՍ նախարարի հրամանով սահմանված ընթացակարգին և ժամանակացույցին համապատասխան:			
3.	Հանրապետական փուլի կազմակերպում	Դպրոցականների առարկայական հանրապետական օլիմպիադաների **հանրապետական փուլի** կազմակերպում 15 առարկաներից:	-**2026թ. փետրվարի 14-ից մարտի 28-ը կազմակերպվել են դպրոցականների առարկայական 14 օլիմպիադաների հանրապետական փուլի աշխատանքները՝** - 2025-2026 ուստարվա հանրապետական օլիմպիադաների 15 առարկաների **հանրապետական** փուլի մասնակիցների ցուցակների հավաքագրվել և հրապարակվել է www.olymp.am կայքում, -Օլիմպիադաները կազմակերպելու համար ձեռք են բերվել՝ ծածկագրված տետրեր, գրիչներ, A4 ֆորմատի թղթեր, դիպլոմներ, գովասանագրեր, - պատճենահանվել և օլիմպիադաների մասնակիցներին են բաժանվել առաջադրանքները,	Առարկայական հանձնաժողովների գնահատման հիման վրա լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտներին ՀՀ ԿԳՄՍ նախարարության դիպլոմներով և գովասանագրերով պարգևատրում:	ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հաստատած ժամանակացույցի /2026թ. փետրվարի 15-ից/:	

			- օլիմպիադաների մասնակիցների համար կազմակերպվել են գիշերակացի և սննդի ծառայություններ, - տրանսպորտի միջոցով ապահովվել է գիշերող մասնակիցների տեղափոխումը, - քիմիա և կենսաբանություն առարկաների փորձարարական փուլերի համար ձեռք են բերվել անհրաժեշտ լաբորատոր նյութեր և սարքեր, -հանձնաժողովների անդամների հետ կնքվել են քաղաքացիաիրավական պայմանագրեր և վճարվել են աշխատավարձեր՝ ըստ նախահաշվի, - հանրապետական փուլի արդյունքները մշակվել են ըստ առարկաների և միավորների, - հանձնաժողովների աշխատանքային բնական գործունեությունը ապահովելու համար տրամադրվել է համապատասխան տարածք, -արդյունքները հրապարակվել են www.olymp.am կայքում, -օլիմպիադաների անցկացման համար հատկացվել են համապատասխան տարածքներ, իսկ ընթացքը վերահսկել են համապատասխան հսկիչ-կազմակերպիչները: - **փետրվարի 14-16-ին կազմակերպվել է մաթեմատիկայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** մասնակիցների թիվը՝ 182, մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 6, 2-րդ կարգի դիպլոմ 15, 3-րդ կարգի դիպլոմ 29, գովասանագիր 24, - **փետրվարի 18-20-ին կազմակերպվել է ֆիզիկայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** - մասնակիցների թիվը՝ 91, մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 5, 2-րդ կարգի դիպլոմ 8, 3-րդ կարգի դիպլոմ 20, գովասանագիր 20, - **փետրվարի 23-ին կազմակերպվել է աստղագիտություն առարկայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 24, մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 2, 2-րդ կարգի դիպլոմ 5, 3-րդ կարգի դիպլոմ 5, գովասանագիր 4, - **փետրվարի 21-22-ին կազմակերպվել է կենսաբանության**			

			հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝ -մասնակիցների թիվը՝ 77, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 3, 2-րդ կարգի դիպլոմ 7, 3-րդ կարգի դիպլոմ 10, գովասանագիր 12, - **փետրվարի 24-25-ին կազմակերպվել է աշխարհագրության հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 89, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 5, 2-րդ կարգի դիպլոմ 10, 3-րդ կարգի դիպլոմ 9, գովասանագիր 16, - **փետրվարի 28-ից մարտի 2-ը կազմակերպվել է քիմիայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 90, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 8, 2-րդ կարգի դիպլոմ 11, 3-րդ կարգի դիպլոմ 7, գովասանագիր 17, **-մարտի 7-8-ը կազմակերպվել է ինֆորմատիկայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 40, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 2, 2-րդ կարգի դիպլոմ 2, 3-րդ կարգի դիպլոմ 17, գովասանագիր 7, - **մարտի 14-15-ը կազմակերպվել է անգլերենի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 97, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 7, 2-րդ կարգի դիպլոմ 8, 3-րդ կարգի դիպլոմ 10, գովասանագիր 20, - **մարտի 14-15-ը կազմակերպվել է ֆրանսերենի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 86, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 5, 2-րդ կարգի դիպլոմ 8, 3-րդ կարգի դիպլոմ 10, գովասանագիր 25, - **մարտի 14-15-ը կազմակերպվել է գերմաներենի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 80, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 5, 2-րդ կարգի դիպլոմ 11, 3-րդ կարգի դիպլոմ 9, գովասանագիր 13, - **մարտի 21-22-ը կազմակերպվել է հայոց լեզվի**			

			հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝ -մասնակիցների թիվը՝ 111, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 9, 2-րդ կարգի դիպլոմ 16, 3-րդ կարգի դիպլոմ 17, գովասանագիր 32, - **մարտի 23-24-ը կազմակերպվել է հայ գրականության հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 116, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 7, 2-րդ կարգի դիպլոմ 9, 3-րդ կարգի դիպլոմ 14, գովասանագիր 20, - **մարտի 25-26-ը կազմակերպվել է ռուսաց լեզվի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 106, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 6, 2-րդ կարգի դիպլոմ 8, 3-րդ կարգի դիպլոմ 13, գովասանագիր 28, - **մարտի 27-28-ը կազմակերպվել է պատմություն առարկայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 114, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 7, 2-րդ կարգի դիպլոմ 8, 3-րդ կարգի դիպլոմ 16, գովասանագիր 19, - ապրիլի 24-26-ը կազմակերպվել է ՆԶՊ առարկայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝ -մասնակիցների թիվը՝ 75, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 6, 2-րդ կարգի դիպլոմ 8, 3-րդ կարգի դիպլոմ 14, գովասանագիր 21:			
4.	Միջազգային թիմերի ձևավորում և նախապատրաստում	ՀՀ առարկայական միջազգային թիմերի նախապատրաստում /Միջազգային թիմերի հավակնորդների հետ լրացուցիչ պարապմունքների կազմակերպում և ՀՀ դպրոցականների միջազգային օլիմպիադաների	-միջազգային օլիմպիադաների 7 առարկաների հանրապետական փուլի 10-12-րդ դասարանների դիպլոմակիրների հետ մարտ ամսին կազմակերպվել են լրացուցիչ պարապմունքներ, - տրամադրվել են սենյակներ, լաբորատորիաներ, փորձեր կատարելու համար անհրաժեշտ սարքեր-սարքավորումներ, նյութերի ու այլ պարագաներ, - կատարվել է միջազգային օլիմպիադաների թիմերի հետ լիացուցիչ պարապմունքներ կազմակերպած մասնագետների վարձատրություն, - ՀՀ առարկայական թիմերը ձևավորելու համար անցկացվել են մրցույթներ,	-թիմային կազմի և թիմային աշխատանքի ստեղծում, - հանգիստ պայմաններում արդյունավետ աշխատանք	ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հաստատած ժամանակացույցի /նախնական՝ 2026թ. մարտ-հունիս/	

		մասնակիցների ընտրություն/:	- ձևավորված թիմերի և նրանց ղեկավարների կազմը ներկայացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի հաստատմանը, - կազմակերպվել է միջազգային օլիմպիադաներից առաջ Երևանից դուրս թիմերի մեկշաբաթյա պարապմունքներ անցկացնելու վայրի ընտրության մրցույթ:			
5.	Միջազգային օլիմպիադաներին ՀՀ թիմերի մասնակցության կազմակերպում	Միջազգային օլիմպիադաներին ՀՀ թիմերի մասնակցության կազմակերպում:	- **կատարվել են հետևյալ աշխատանքները՝** -կազմակերպվել է ՀՀ առարկայական միջազգային հինգ թիմերի վիզաների ձևակերպման, մասնակիցների ավիատոմսերի և առողջական ապահովագրության ձեռքբերման աշխատանքները, - վճարվել են թիմերի մասնակցության անդամավճարները, - վճարվել են թիմերի գիշերակացի և օրապահիկի գումարները:			
6.	Առարկայական օլիմպիական խմբակների կազմակերպում	Միջազգային օլիմպիադաների յոթ առարկաներից հանրապետական փուլի դիպլոմակիրների հետ խմբակների կազմակերպում	- olymp.am կայքում տեղադրվել է հայտարարություն 2025-2026թթ. 10-12-րդ դասարանների մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, աստղագիտություն և ինֆորմատիկա առարկաների հանրապետական փուլի դիպլոմակիրների հետ լրացուցիչ պարապմունքներ անցկացնելու մասին, - ընտրվել են խմբավարներ, նրանց հետ կնքվել են աշխատանքային պայմանագրեր, - ըստ ցանկացողների կազմվել են խմբակների մասնակիցների անվանացանկերը, -նրանց հետ ապրիլ-մայիս-հունիս ամիսներին անցկացվել են օնլայն պարապմունքներ, որոշ պարապմունքներ նկարահանվել են և տեղադրվել խմբակի մասնակիցներին հասանելի հարթակում, - պարապմունքերի անցկացման համար անհրաժեշտության դեպքում տրամադրվել են սենյակներ և սարքեր, - կատարվել է խմբավարների վարձատրություն:	-Դիպլոմակիր աշակերտների հետ մշտական աշխատանքի կազմակերպում, -նրանց մոտ օլիմպիական որակների բարձրացում,		
7.	olymp.am կայքի վարում	olymp.am կայքի վարում, համացանցի օգտագործմամբ հանրապետական օլիմպիադաների աշխատանքների կազմակերպում և	- **կատարվել են հետևյալ աշխատանքները՝** -olymp.am կայքի թարմացում, օլիմպիադաների մասին տեղեկությունների, արդյունքների, հայտարարությունների տեղադրում: -մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, ինֆորմատիկա, աստղագիտություն, աշխարհագրություն առարկաների օլիմպիադաների առաջին և երկրորդ փուլերի կազմակերպում համացանցի օգտագործմամբ,	Օլիմպիադաների նկատմամբ աշակերտների մոտ հետաքրքրությունների ստեղծում և զարգացում: Հանրապետական և միջազգային օլիմպիադաների մասին	2026թ. հունվար-դեկտեմբեր	

		այլն	-համեմատական վերլուծությունների կատարում, -Հանրապետական օլիմպիադաների մասին ամբողջական տեղեկատվությունների տեղադրում /ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամաններ, ընթացակարգեր, տարբեր փուլերի մասնակիցների անուններ, առաջադրանքներ ու պատասխաններ, արդյունքներ, դիպլոմակիրներ/ olymp.am կայքում, -olymp.am կայքում տեղադրվել են լրացուցիչ պարապմունքների, թիմերի կազմավորման համար անցկացվող մրցույթների մասին հայտարարություններ, - olymp.am կայքում տեղադրվել են միջազգային այլ օլիմպիադաներին մասնակցած ՀՀ դպրոցականների մասին ամփոփ տեղեկություն՝ մասնակիցների անվանացանկերը և արդյունքները: - տեղադրվել են միջազգային օլիմպիադաներում ՀՀ մասնակից թիմերի անվանացանկերը, ԿԳՄՍ նախարարի հրամանները:	լիարժեք տեղեկությունների ապահովում և անհրաժեշտ նյութերի և առարկայական օլիմպիադաների գրքույկների հրատարակում:		

Երևանի Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ

մասնագիտացված դպրոցի տնօրեն՝ Ա.Սարգսյան

08.07.2026թ.